ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Հ.ԲԻՇԱՐՅԱՆ

«23» մայիս 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Եվգենիա Էդուարդի Գյանջումյանի՝ «Սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում. գենեզիսը, տեսակները և ժամանակակից զարգացումը» թեմայով ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2025 թվականի մայիսի 23-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 7):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Ա. Մելիքսեթյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Թադևոսյանը, ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ. Դ. Սարգսյանը, ի.գ.թ. Զ. Սմբատյանը, ի.գ.թ. Ս. Իսկանդարյանը, ի.գ.թ. Կ. Բատիկյանը, Լ.Զիրոյանը, Մ. Համբարձումյանը, Գ. Ադոնցը, Զ. Մկրտչյանը, Ա. Թորոսյանը, Ա. Նահապետյանը, Ա. Կոչուբաևը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման առանձնահատկություններին և ժամանակակից զարգացմանը և իրենից ներկայացնում է սահմանափակ իրային իրավունքների համակարգին նվիրված ամբողջական և տարածական հետազոտություն:

Ատենախոսության հեղինակը հետազոտության արդիականությունը պայմանավորել է մի շարք հանգամանքներով, որոնցից առանձնահատուկ կարևորվում է իրավունքի զարգացման հայեցակարգային մոտեցումների առաջադրումը և շուկայական տնտեսության պայմաններում սահմանափակ իրային իրավունքների՝ հատկապես սերվիտուտի, ուզուֆրուկտի և կառուցապատման իրավունքի արդիականացման անհրաժեշտությունը՝ ապահովելով սահմանափակ իրային իրավունքների բազմազանություն և ճկունություն, հնարավորություն տալով իրավաբանական և ֆիզիկական անձանց ընտրել իրենց իրավատնտեսական շահերին համապատասխանող իրային իրավունքը:

Այդ կապակցությամբ հեղինակը որպես ուսումնասիրության հիմնական նպատակ սահմանել է սահմանափակ իրային իրավունքների եզրույթի, էության և տեսակների վերլուծումը, ինչպես նաև ՀՀ ժամանակակից քաղաքացիական օրենսդրության շրջանակներում սահմանափակ իրային իրավունքների համակարգի համապարփակ վերանայումն ու դոկտրինալ նախագծումը և այդ կապակցությամբ առաջադրել լուծման ենթակա խնդիրներ և սահմանել աշխատանքի տրամաբանական կառուցվածք:

Այս հանգամանքները պայմանավորում են հետազոտության տեսական և պրակտիկ արդիականությունը: Աշխատանքում բարձրացված հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում իրականացվող փոփոխությունների համատեքստում, ինչպես նաև գործածվել Քաղաքացիական իրավունք դասընթացի շրջանակներում որպես դոկտրինալ

դոկտրինալ մոտեցումներ: Այսպիսով՝ ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը կասկած չեն հարուցում:

Ատենախոսության հետ ներկայացված սեղմագիրն ամփոփ արտացոլում է պաշտպանության հանվող դրույթները, հետազոտության տեսական, մեթոդաբանական հիմքը, գիտագործնական արժեքը և ատենախոսի հիմնական եզրահանգումները:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն ընդգծվում է մի քանի առանցքային տարրերով՝

- Իրային իրավունքների հատկանիշների տեսական քննարկումը և նոր՝ հեղինակային սահմանման առաջարկը,
- Սահմանափակ իրային իրավունքների դասակարգման նոր մոդել,
- Լատենտային իրային իրավունքների հեղինակային տեսություն:

Պաշտպանության ներկայացվող դրույթները պարունակում են գիտական նորույթ և դրանցից մի քանիսը, մեր կարծիքով, արժանի են առանձին ուշադրության: Մասնավորապես՝

1. Սահմանափակ իրային իրավունքների ինստիտուտի նկատմամբ համակարգային մոտեցում կիրառելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի համար ավելի քան բարենպաստ է կառուցել այնպիսի սահմանափակ իրային իրավունքների համակարգ, որը ստեղծվում է սեփականության իրավունքի ծավալի մասնատման արդյունքում, մշակել է սահմանափակ իրային իրավունքների հեղինակային դասակարգում, որը հիմնված է սեփականատիրոջ իրավազորությունների տարբեր համակցությունների վրա:

2. Ատենախոսությամբ հիմնավորվում է, որ լեգատի ինստիտուտը քաղաքացիական օրենսդրության մեջ անձնական սերվիտուտի արտացոլումն է, ինչն օրենսդրի կողմից ամբողջությամբ անտեսվել է անձնական սերվիտուտի ինստիտուտի ներդրման ժամանակ: Այդ խնդրի լուծման համար հեղինակը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-217.7-րդ հոդվածներում սահմանված իրավական դրույթներին՝ որպես անձնական սերվիտուտների

առաջացման հիմք նախատեսելով նաև կտակային հանձնարարությունը՝ հետագայում անձնական սերվիտուտների բովանդակության ներդաշնակեցմամբ:

3. Գիտական հետազոտության արդյունքում ատենախոսության մեջ նշվում է, որ ներպետական քաղաքացիական իրավունքում սահմանափակ իրային իրավունքն իր բնույթով ածանցյալ և կախյալ է: Համապատասխանաբար, սահմանափակ իրային իրավունքների բովանդակությունը ձևավորվում է սեփականության իրավունքի իրավազորությունների միջոցով՝ տարբեր կոնֆիգուրացիաներով, առանց դրանց շրջանակներից դուրս գալու, ինչը նպաստում է համահունչ համակարգի կառուցմանը: Վերոնշյալ դիտարկման լույսի ներքո՝ հեղինակն ատենախոսությամբ հիմնավորում է, որ սահմանափակ իրային իրավունքն ուրիշի գույքի նկատմամբ իրային իրավունքն է:

Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար

Աշխատանքի տեսական արժեքը կայանում է քաղաքացիական իրավունքի հիմնարար կատեգորիաների խոր վերլուծության և համակարգային մոտեցմամբ կառուցված սահմանումների մշակման մեջ: Հեղինակի մոտեցումները՝ կապված իրային իրավունքների տարանջատման, դրանց հատկանիշների սահմանման, և օրենսդրական լուծումների առաջարկման հետ, գիտական արժեք ունեն և կարող են հիմք հանդիսանալ հետագա հետազոտությունների և կրթական գործունեության համար:

Գործնական առումով աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել օրենքի նախագծման, իրավակիրառ պրակտիկայի և դատական մեկնաբանությունների մակարդակով՝ ուղղված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի բարեփոխմանը, իրային իրավունքների կարգավիճակի հստակեցմանը և ներդաշնակեցմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 211-րդ հոդվածով հողամասի կամ այլ անշարժ գույքի նկատմամբ սահմանված բացասական սերվիտուտի իրային բնույթի ամրագրման հետ

անհամաձայնությունը վիճահարույց է և ունի հիմնավորման կարիք: Հեղինակը նշում է, որ դա հնարավոր է դառնում ատենախոսության մեջ մշակված չափանիշների (ենթադրաբար 1-ին դրույթում սահմանված հեղինակային ձևակերպումները) հիմնավորմամբ: Այս համատեքստում արժե հիշատակել, որ իրային իրավունքը, (հատկապես սերվիտուտը), կարող է արտահայտվել ոչ միայն ուղղակի օգտագործման իրավունքով, այլ նաև օգտագործման սահմանափակման միջոցով: Այսինքն՝ սեփականատիրոջ իրավունքի սահմանափակումն ինքնին կարող է վերածվել ուրիշի իրավունքի իրականացման ձևի: Բացի այդ, թե դրական, թե բացասական սերվիտուտը այս կարգավորմամբ հասցեագրված է կոնկրետ անձի և գույքի՝ հողամասի սեփականատիրոջ: Կարծում ենք, որ այս համատեքստում բացասական սերվիտուտն իրային չհամարելը կարելի է դիտարկել հեղինակի ինքնուրույն դիրքորոշում, որը որպես պաշտպանության դրույթ ունի լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն:

2. Հեղինակն օգտագործում է «լատենտային իրային իրավունքներ» տերմինը, սակայն դրա հիմքում ընկած տեսական մոտեցումը լիարժեք չի հստակեցվում: Առկա է մեթոդաբանական բաց՝ չի հստակեցվում, թե ինչ չափանիշներով կարելի է որևէ իրային իրավունք համարվել «լատենտային», և ինչ իրավական հետևանքներ ունի այդ դասակարգումը:

3. Հեղինակն ատենախոսության 69-րդ էջում եզրահանգում է, որ թեև տեսականորեն հնարավոր է անցում կատարել սահմանափակ իրային իրավունքների բաց ցանկին («numerus apertus» սկզբունքին)՝ հայկական իրավական իրականությունում առայժմ չկա այդ սկզբունքից հրաժարվելու հրատապ անհրաժեշտություն և ներկայացնում է իր որոշ դիտարկումները: Այնուհետև եզրակացությունների 7-րդ կետում արդարացի է համարում ստեղծված օրենսդրական վակուումի պայմաններում սահմանափակ իրային իրավունքների փակ ցանկի սկզբունքին («numerus clausus») հետևելու օրենսդրի հակվածությունը: Նշվածի հաշվառմամբ 3-րդ դրույթում ներառված միտքն առ այն, որ առկա է իրային իրավունքների փակ ցուցակի («numerus clausus») մասին սկզբունքի խստությունը մեղմացնելու և իրային իրավունքների բաց ցուցակին («numerus apertus») անցնելու

տեսական հնարավորություն, ունի որպես գիտական նորույթ դրա կիրառական նշանակության լրացուցիչ պարզաբանման կարիք:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Սույն կարծիքում նշված դիտողությունները չեն ազդում Եվգենիա Էդուարդի Գյանջումյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Եվգենիա Էդուարդի Գյանջումյանի՝ «Սահմանափակ իրային իրավունքների համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում՝ գենեզիսը, տեսակները և ժամանակակից զարգացումը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման գործող կարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը կարող է արժանանալ ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ դ.գ.թ. Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ Գիտական խորհրդի քարտուղար՝ դ.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյան